ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՆԱ-ՀՄԱ-ԾՁԲ-17/34

ք. Երևան <<30>> << 06 >> 2017թ.

ՀՀ Նախագահի աշխատակազմը, ի դեմս գործերի կառավարիչ՝ Վ. Գրիգորյանի, որը գործում է ՀՀ Նախագահի աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կոնսէլ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Փափազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **էլեկտրական սարքվորումների տեղադրման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման ակտագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **500 000** (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

...երությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող ...րով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման ...հանգով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի ...նրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1 N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Նախագահի աշխատակազմ	«Կոնսէլ» ՍՊԸ
Ք. Երևան, Բաղրամյան 26	ք.Երևան, Չարենցի 44-7
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011204089	Հ/Հ 1570004714720100
ՀՎՀՀ 00006505	ՀՎՀՀ 01539021
Գործերի կառավարիչ	Տնօրեն՝
Վ. Գրիգորյան ______________ (ստորագրություն)	Ա. Փափազյան ______________ (ստորագրություն) Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«30» « 06 » 2017թ. կնքված
ՀՀՆԱ-ՀՄԱ-ԾՁԲ-17/34 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	51621100/1	էլեկտրական սարքվորումների տեղադրման ծառայություն	դրամ	500 000	1	Ք.Երևան, Բաղրամյան 26	15.12.2017թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Նախագահի աշխատակազմ
Ք. Երևան , Բաղրամյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505
Գործերի կառավարիչ

Վ. Գրիգորյան

ԿԱՏԱՐՈՂ
«Կոնսէլ» ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 44-7
«Ամերիաբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1570004714720100
ՀՎՀՀ 01539021
Տնօրեն

Ա. Փափազյան

Հավելված N 2
« 30 » « 06 » 2017թ. կնքված
ՀՀՆԱ-ՀՄԱ-ԾՁԲ-17/34 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	51621100/1	էլեկտրական սարքվորումների տեղադրման ծառայություն	-	-	-	-	-	-	100 000	200 000	300 000	350 000	450 000	500 000	**500 000**

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Նախագահի աշխատակազմ
Ք. Երևան , Բաղրամյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011204089
ՀԿՀՀ 00006505
Գործերի կառավարիչ

Վ. Գրիգորյան

ԿԱՏԱՐՈՂ
«Կոնսալ» ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 44-7
«Ամերիաբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1570004714720100
ՀԿՀՀ 01539021
Տնօրեն

Ա. Փափազյան

Հավելված 3
« 30 » « 06 » 2017թ. կնքված
ՀՀՆԱ-ՀՄԱ-ԾՁԲ-17/34 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Կոնսել» ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 44/7
«Ամերիաբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1570004714720100
ՀՎՀՀ 01539021

Պատվիրատու
ՀՀ Նախագահի աշխատակազմ
Ք. Երևան , Բաղրամյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՀՀ Նախագահի աշխատակազմի կարիքների համար էլեկտրական սարքվորումների տեղադրման ծառայությունների մատուցման
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «30» «06» 2017 թ.
Պայմանագրի համարը՝ *ՀՀՆԱ-ՀՄԱ-ԾՁԲ-17/34*
Պատվիրատուն՝ ի դեմս Վ. Գրիգորյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Փափազյանի հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2017 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
ստորագրություն	ստորագրություն
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 30 » « 06 » 2017թ. կնքված
ՀՀՆԱ-ՀՄԱ-ԾՁԲ-17/34 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Նախագահի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<Կոնսել>> ՍՊԸ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2017 թ. « » « »-ին կնքված N *ՀՀՆԱ-ՀՄԱ-ԾՁԲ-17/34* գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2017 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 1.1
<<30>> հունիսի 2017 թ. կնքված
N ՀՀՆԱ-ՀՄԱ-ԾՁԲ-17/34 ծածկագրով գնման պայմանագրի

ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Անվանումը	Մեկ միավորի արժեքը ՀՀ դրամով՝ ներառյալ ԱԱՀ-ն
1	Էլեկտրական ջերմային տվիչի փոխարինում կանալային օդորակիչների,և օդափոխության համակարգերի (միայն աշխատանքի արժեքը)	9500
3	Էլեկտրական կոնդենսատորի փոխարինում չիլերի, կանալային օդորակիչների,և օդափոխության համակարգերի (միայն աշխատանքի արժեքը)	4750
5	Տրանսֆորմատորի փոխարինում կանալային օդորակիչների,և օդափոխության համակարգերի (միայն աշխատանքի արժեքը)	14250
7	Էլ. պլատայի նորոգում կանալային օդորակիչների,և օդափոխության համակարգերի (միայն աշխատանքի արժեքը)	10000 - 47000
9	Էլ. պլատայի փոխարինում կանալային օդորակիչների,և օդափոխության համակարգերի (միայն աշխատանքի արժեքը)	9500-28500
12	Ներքին բլոկի օդամուղի շարժիչի նորոգում կանալային օդորակիչների(ներառյալ փոխարինող պահեստամասի արժեքը)	66500-190000
13	Ներքին բլոկի օդամուղի շարժիչի փոխարինում կանալային օդորակիչների (միայն աշխատանքի արժեքը)	19000
15	Արտաքին բլոկի օդամուղի շարժիչի նորոգում (միայն աշխատանքի արժեքը)	19000-190000
19	Կանալային օդորակիչների և չիլերի արտաքին բլոկի սառեցնող օդամուղի թևերի փոխարինում (միայն աշխատանքի արժեքը)	19000
21	Օդորակիչների եռաքայլ փականի(ռեվերս) փոխարինում (միայն աշխատանքի արժեքը)	76000-190000
23	Կանալային օդորակիչների ներքին բլոկի մոնտաժ(միայն աշխատանքի արժեքը)	28500
24	Կանալային օդորակիչների արտաքին բլոկի ապամոնտաժում (միայն աշխատանքի արժեքը)	22000
25	Կանալային օդորակիչների արտաքին բլոկի մոնտաժ(միայն աշխատանքի արժեքը)	28500
26	Կանալային օդորակիչների արտաքին բլոկի ապամոնտաժում(միայն աշխատանքի արժեքը)	15000
27	Կոմպրեսորի փոխարինում կանալային օդորակիչների(միայն աշխատանքի արժեքը)	45000 - 280000
32	Փականի փոխարինում (զոդելով և գազի լիցքավորումով) (միայն աշխատանքի արժեքը)	15000 - 45000
34	Կանալային օդորակիչների արտաքին բլոկի ջերմափոխանակչի նորոգում ապամոնտաժելով և մոնտաժելով (զոդելով և գազի լիցքավորումով) (միայն աշխատանքի արժեքը)	76000-150000

	Կանալային օդորակիչների ներքին բլոկի ջերմափոխանակչի նորոգում ապամոնտաժելով և մոնտաժելով(զոդելով և գազի լիցքավորումով)(միայն աշխատանքի արժեքը)	55500
40	Կանալային օդորակիչների խողովակների փոխարինում (միայն աշխատանքի արժեքը)	2500 - 4000
42	Փոխարինում էլեկտրոտեն օդամուղի(միայն աշխատանքի արժեքը)	14250 - 32500
43	Փոխարինում էլեկտրոտեն օդամուղի (ներառյալ փոխարինող պահեստամասի արժեքը)	38000
44	Զոդում(ներառյալ զոդանյութը)	1500 - 2500
45	Ավտոաշտարակի ծառայություն	7000
46	Գազ ֆրեոնի R22 արժեքը (1կգ)	3500
47	Գազ ֆրեոնի R410 արժեքը (1կգ)	8000
49	Կանալային կոնդիցիոների ախտորոշում	7500
50	Էլ.սարքերի(կալորիֆեր,օդային վարագույր) ախտորոշում	7500
51	Ֆանկոյլի ախտորոշում	7500
52	Կանալային կոնդիցիոների ներքին բլոկի ֆիլտրի մաքրում	7000
53	Կանալային կոնդիցիոների ներքին բլոկի ջերմափոխանակչի մաքրում	25000
54	Կանալային կոնդիցիոների ներքին բլոկի օդամուղի մաքրում	35000
55	Կանալային կոնդիցիոների արտաքին բլոկի ջերմափոխանակչի մաքրում	35000
56	Չիլերի ջերմափոխանակչի մաքրում	28500
57	Չիլերի սեզոնային սպասարկում (կոնսերվացում և ապակոնսերվացում)	57000
59	Կանալային կոնդիցիոների ֆրեոնի ճնշումների ստուգում	4750
60	Ֆանկոյլի ֆիլտրի մաքրում	4500
61	Ֆանկոյլի ջերմափոխանակչի մաքրում	9500 - 19000
62	Կանալային կոնդիցիոների ջրահեռացման խողովակաշարի ստուգում և մաքրում	19000
64	Ներածման և արտածման սարքավորումների ամրացումների ստուգում, շարժիչների ստուգում, կարգավորում	12500

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Նախագահի աշխատակազմ
Ք. Երևան , Բաղրամյան 26
ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900011204089
ՀՎՀՀ 00006505
Գործերի կառավարիչ

Վ. Գրիգորյան

ԿԱՏԱՐՈՂ
«Կոնսալ» ՍՊԸ
ք.Երևան, Չարենցի 44/7
«Ամերիաբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1570004714720100
ՀՎՀՀ 01440153 9021
Տնօրեն

Ա. Փափազյան